

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպը շարունակում է դանդաղել, քանի որ մի կողմից՝ արդեն չեզոքացել են նախորդ տարիներին բարձր տնտեսական աճ ապահովող գործոնների ազդեցությունները (ՌԴ-ից մարդկանց և կապիտալի ներհոսքի կտրուկ աճ, արտահանման և վերաարտահանման պահանջարկի աճ և այլն), մյուս կողմից՝ սկսում է էականորեն փոքրանալ նախորդ տարվա վերջում և ընթացիկ տարվա սկզբում տնտեսական աճն արագացնող հիմնական գործոնը՝ ոսկերչական գործունեության ծավալը: Հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 7.1%, որը թեև բարձր է մայիսի ցուցանիշից, սակայն տարեսկզբի ցուցանիշների համեմատ էականորեն ավելի ցածր է: Կուտակային ՏԱՑ-ը նույնպես շարունակում է դանդաղել՝ հասնելով 10.4%-ի՝ հունվար-մայիսի 11.2%-ի համեմատ:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹




2024թ. հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 9.8 և 3.9 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.0 և 0.8 տոկոսային կետով:

ՏԱՑ-ի աճին դրական նպաստում է ունեցել նաև գյուղատնտեսության ոլորտի 4.0% աճը, որի նպաստումն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել է 0.3 տոկոսային կետ:


¹ Նախորդ ամիսների, ինչպես նաև 2023թ. ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-հունիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն²

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպն էականորեն նվազել է: 2024թ. հունիսին արդյունաբերության աճը կազմել է 1.4%՝ տարեսկզբի առաջին երեք ամիսների միջին 29.2%-ի դիմաց: Ընդ որում, նախորդ տարվա հունիսին գրանցվել էր արդյունաբերության անկում, ինչը, որպես բազային էֆեկտ, պետք է հանգեցներ ընթացիկ տարում արդյունաբերության աճի արագացմանը: Հետևաբար, եթե նախորդ տարվա անկումը չլիներ, ապա այս տարվա աճն ավելի ցածր կարող էր

² Արդյունաբերության աճի նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

լինել: Ինչպես նշել էինք նախորդ ամիս, արդյունաբերության ցածր աճերը հավանաբար կպահպանվեն հաջորդ ամիսներին:

Արդյունաբերության հունվար-մայիս³ ամիսների աճը շարունակում է առավելապես պայմանավորված լինել մշակող արդյունաբերության աճով, որը կազմել է 33.7%՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով 21.7 տոկոսային կետով (հունվար-ապրիլին՝ 25.4 տոկոսային կետ էր): Վերջինս ամբողջովին պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության ենթաճյուղում ներառված «հիմնային մետաղների արտադրություն» գործունեության տեսակի շուրջ 4.3 անգամ աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերությանը ևս կազմել է 21.7 տոկոսային կետ: Ինչպես նշել էինք նախորդ ամիս, այս աճը պայմանավորված է նրանով, որ վերջին ամիսների ոսկերչական իրերի վերաարտահանման գործունեությունը սկսել է ներկայացվել «հիմնային մետաղների արտադրություն» տողով:

Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում են ունեցել նաև այլ ենթաճյուղեր, որոնք, սակայն, հակակշռվել են մյուսների բացասական նպաստումներով: «Էլեկտրական սարքավորանքի արտադրություն», «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» ենթաճյուղերը աճել են համապատասխանաբար 59.9%-ով և 5.0%-ով՝ արդյունաբերության աճին նպաստելով 0.5 և 0.3 տոկոսային կետով, իսկ «սննդամթերքի արտադրություն», «պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում» և «մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» ենթաճյուղերը նվազել են համապատասխանաբար 1.4%, 9.5% և 35.7%՝ արդյունաբերության աճին հակազդելով համապատասխանաբար 0.3, 0.2-ական տոկոսային կետով:


Հանքարդյունաբերության ոլորտում շարունակվում է անկման տեմպերի խորացումը: Հունվար-մայիսին անկումը կազմել է 8.8%՝ հունվար-ապրիլի 7.2%-ի դիմաց: Ընդհանուր արդյունաբերության աճին հանքարդյունաբերության անկումը հակազդել է 1.75 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 13.3% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 1.9 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 5.7% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

³ Արդյունաբերության հունիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը, ի տարբերություն տնտեսության մյուս ոլորտների, շարունակում է մնալ բարձր մակարդակում: 2024թ. հունիսին շինարարության աճը կազմել է 18.0%, իսկ հունվար-հունիս ամիսների կուտակային աճը՝ 15.7%՝ արագանալով 0.8 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով, որն էլ իր հերթին պայմանավորված է հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով կատարված ծախսերի դիմաց եկամտային հարկի վերադարձի ծրագրով, այդ պատճառով էլ շինարարության ոլորտի դինամիկան շեղվում է ընդհանուր տնտեսության միտումներից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը որոշակիորեն վերականգնվել է՝ ապահովելով ՏԱՑ-ի արագացումը: 2024թ. հունիսին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 7.8%՝ շուրջ 5.0 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից և նպաստելով հունիսի ՏԱՑ-ի արագացմանը: Արդյունքում ծառայությունների աճը հունվար-հունիսին արագացել է 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 4.4%:

Ըստ հունվար-մայիս⁴ ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը շարունակում է պայմանավորված լինել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտով, որի աճը կազմել է 18.0%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 4.8 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից և տեղեկատվության և կապի ոլորտից, որոնք նվազել են համապատասխանաբար 16.9%-ով և 9.9%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.2 և 2.1 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը շարունակում է դանդաղել: Առևտրի ոլորտում հունիսին գրանցվել է 16.2% աճ, որը 1.4 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից, ինչպես նաև էականորեն ցածր է հունվար-ապրիլի միջին ցուցանիշից՝ 26.3%-ից: Հատկանշական է, որ արդյունաբերության աճի տեմպի կտրուկ դանդաղումը վերջին երկու ամիսներին համընկել է առևտրի աճի դանդաղման

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

հետ, և կապված է այն հանգամանքի հետ, որ ոսկերչական գործունեության աճն արտացոլվում էր նաև առևտրի ցուցանիշներում:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճն էականորեն ցածր է եղել նախորդ ամիսների ցուցանիշներից: 2024թ. հունիսին արտահանման աճը կազմել է 59.9%, որը թեև փոքր-ինչ (1.9 տոկոսային կետով) բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն էականորեն ցածր է հունվար-ապրիլ ամիսների աճերից, որի պատճառը ոսկերչական գործունեության ծավալների էական անկումն է: Հունվար-հունիս ամիսների արտահանման ծավալների աճը դանդաղել է՝ կազմելով 134.4% (2.3 անգամ): Սակայն եթե ոսկերչական ապրանքների վերաարտահանման գործունեությունը չվերականգնվի, ապա հաջորդ ամիսներին արտահանման աճերը կպահպանվեն տարեսկզբի համեմատ ցածր մակարդակներում՝ հանգեցնելով կուտակային աճի նվազմանը:

2024թ. հունվար-մայիս⁶ ամիսների ընթացքում արտահանման աճը գրեթե ամբողջությամբ ապահովվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի շուրջ 8.3 անգամ աճի հաշվին: Վերջինիս նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 160.6 տոկոսային կետ: Արտահանման կառուցվածքում աճեր են գրանցվել նաև «հանքահումքային արտադրանք», «մանածագործական իրեր» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի գծով, որոնց ընդհանուր


⁵ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

նպաստումն արտահանման աճին եղել է բավական փոքր՝ 3.3 տոկոսային կետ: Մնացած բոլոր ապրանքատեսակների գծով գրանցվել է կամ զրոյական աճ, կամ անկում:

Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու վերաարտահանման) ընդհանուր արտահանումն անկում է ապրել 15.6%-ով: Սա բավական մտահոգիչ է և ցույց է տալիս, որ նախկինում նշված մտահոգությունները արտահանման ներուժի նվազման վերաբերյալ առարկայանում են:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը և էականորեն նվազել է՝ գտնվելով նախորդ տարվա աճերից ցածր մակարդակներում: Ներմուծման աճի տեմպը 2024թ. հունիսին կազմել է 20.6%՝ էականորեն ցածր լինելով ինչպես նախորդ ամիսների, այնպես էլ նախորդ տարվա ցուցանիշներից: Սա կապված է մի կողմից՝ ոսկերչական ապրանքների վերաարտահանման ծավալների նվազման, մյուս կողմից՝ այլ ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ:

2024թ. հունվար-մայիս ամիսների⁷ տվյալներով ներմուծման աճը, արտահանման նման, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 9.8 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 108.4 տոկոսային կետով:

Ներմուծման կառուցվածքում պատկերը նույնպես մտահոգիչ է: Դրական են նպաստել «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի


⁷ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերը, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 31.5% և 16.8%, իսկ նպաստումները ներմուծման աճին՝ 1.7 և 0.8 տոկոսային կետ: Ներմուծման մյուս ապրանքախմբերի գծով նպաստումները կա՛մ զրոյական են, կա՛մ բացասական: Սա էլ իր հերթին վկայում է ներքին թույլ պահանջարկի մասին:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ⁸

Աշխատավարձի աճը շարունակում է դանդաղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 7.5%-ով (հունվար-ապրիլի համեմատ դանդաղել է 0.3 տոկոսային կետով)՝ կազմելով 279,712 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.3%-ով (հունվար-ապրիլի համեմատ դանդաղել է 0.3 տոկոսային կետով)՝ կազմելով 307,742 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է 210,475՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.9%:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-մայիսին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամի փոխարժեքը հունիսին կայուն է մնացել: Դրամի միջին փոխարժեքը հիմնական արժույթների նկատմամբ գրեթե չի փոխվել հունիսին՝ մայիսի համեմատ: Սակայն հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամը շարունակել է արժեզրկված մնալ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ 1.6-ական տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ եղել է արժևորված՝ շուրջ 16.3%-ով: Ընդ որում, ՀՀ ապրանքների՝ արտաքին շուկաներում գնային մրցունակության համար առավել կարևոր է ՌԴ ռուբլու նկատմամբ

փոխարժեքը, որն արդեն բավական երկար ժամանակ գտնվում է գերաբնորոշված դիրքում:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁹

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը շարունակում է մնալ ցածր մակարդակում: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-հունիսին կազմել են 1,243.7 մլրդ դրամ՝ աճելով 5.0%-ով, որը հունվար-մայիսի համեմատ ցածր է 0.1 տոկոսային կետով: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարության կայքում սկսել են հրապարակվել համադրելի ցուցանիշները, այսինքն՝ նախորդ տարիների ցուցանիշներում (և՛ եկամուտներում, և՛ ծախսերում) սկսել են ներառվել հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները:

Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-հունիսին կազմել է 5.3%՝ հունվար-մայիսի նկատմամբ արագանալով 0.2 տոկոսային կետով: Ոչ հարկային եկամուտների գծով գրանցվել է 2.3% նվազում, իսկ պաշտոնական դրամաշնորհները աճել են 2.5%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկ է նշել, սակայն, որ թեև հարկային եկամուտները աճել են նախորդ տարվա համեմատ, դրանք էականորեն թերակատարվել են բյուջեով սահմանված

⁹ ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից՝ 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:

պլանի նկատմամբ: Այսպես, 2024թ. առաջին կիսամյակի համար պլանավորվել էր հավաքագրել 1,304.2 մլրդ դրամ, սակայն փաստացի հավաքագրվել է 1,187.6 մլրդ դրամ՝ 116.6 մլրդ դրամով պակաս:

Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-հունիսին հիմնականում պայմանավորված է եղել բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ շուրջ 2.2 անգամ), եկամտային հարկի (աճը՝ 9.0%) և շահութահարկի (աճը՝ 4.4%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.4, 2.3 և 0.9 տոկոսային կետ:


ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով մուտքերը հունվար-հունիս ամիսներին նույնպես նվազել են համապատասխանաբար 4.9% և 9.7%՝ ընդհանուր հարկային եկամուտներին հակազդելով 1.5 և 0.5 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-հունիս		2024թ. հունվար- հունիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	19.4	19.4	5.3	5.3
Ավելացված արժեքի հարկ	20.1	6.1	-4.9	-1.5
Ակցիզային հարկ	24.7	1.3	-9.7	-0.5
Շահութահարկ	44.9	7.7	4.4	0.9
Պետական տուրք	-53.1	-3.4	17.4	0.4
Մաքսատուրք	128.8	2.1	1.9	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-56.7	-3.2	116.3	2.4
Այլ հարկեր	47.5	1.2	8.5	0.3
Շրջանառության հարկ	33.0	0.6	16.6	0.4
Եկամտային հարկ	20.9	5.4	9.0	2.3
Սոցիալական վճարումներ	46.9	1.5	15.9	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը մնում է բարձր մակարդակում:

Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-հունիս ամիսներին կազմել են 1,232.7 մլրդ դրամ՝ աճելով 17.4%-ով: Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 15.2%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 13.5 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների աճի տեմպը ևս բավական բարձր է եղել՝ կազմելով 35.3% և ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.8 տոկոսային կետով:

Ընդ որում, ծախսերը ևս թերակատարվել են պլանի նկատմամբ: Մասնավորապես, 2024թ. առաջին կիսամյակում նախատեսվել էր իրականացնել 1,362.7 մլրդ դրամի չափով ընդհանուր ծախս, սակայն փաստացի ծախսերը եղել են շուրջ 130.0 մլրդ դրամով ավելի պակաս: Առավել ուշագրավ է այն, որ ծախսերի թերակատարումը տեղի է ունեցել ընթացիկ ծախսերի հաշվին (շուրջ 133 մլրդ դրամով), իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) գերակատարվել են 5.1 մլրդ դրամով: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ կապիտալ ծախսերի բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է պաշտպանության ոլորտում մեծ ծավալով ծախսերի իրականացմամբ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Չնայած եկամուտների էական թերակատարմանը, 2024թ. առաջին կիսամյակում պետական բյուջեն եղել է հավելուրդային, որը կազմել է շուրջ 11 մլրդ դրամ: Այս դեպքում բյուջեն ևս շեղվել է պլանից, քանի որ առաջին կիսամյակի պլանի համաձայն՝ նախատեսված էր ունենալ շուրջ 11.9 մլրդ դրամի չափով պակասուրդ:

5.4. Պետական պարտք


2024թ. հունիսին ՀՀ պետական պարտքի անվանական ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ շարունակել է աճել: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) հունիսի վերջի դրությամբ կազմել է 12.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունիսի համեմատ աճելով 9.5%-ով: Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 11.65 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 10.3%-ով:

Պարտքի աճը տեղի է ունեցել ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 27.3% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) շարունակել է նվազել՝ շուրջ 2.6%-ով: Արդյունքում հունիսի վերջի դրությամբ ներքին պարտքի կշիռն ընդհանուր պարտքի կառուցվածքում աճել է՝ կազմելով 50.7%:

2024թ. հունիսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է: Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների նվազմանը զուգահեռ, նվազում է նաև պետական պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը): Նվազման չափը հունիսին՝ մայիսի նկատմամբ կազմել է 0.2 և 0.1 տոկոսային կետ, համապատասխանաբար կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի

դեպքում, իսկ նախորդ տարվա հունիսի նկատմամբ նվազումները կազմել են համապատասխանաբար 2.1 և 1.3 տոկոսային կետ:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը փոքր-ինչ արագացել է: 2024թ. սկզբից այն գտնվում էր բացասական տիրույթում, սակայն մայիսից տեղափոխվել է դրական տիրույթ և փոքր-ինչ արագացել: Գնաճի որոշակի արագացումը կարող է բացատրվել «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբի գների անկման տեմպի մեղմմամբ (գնանկումը -2.0%-ից դարձել է -0.7%):


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը տատանողական է վերջին ամիսներին, սակայն ընդհանուր առմամբ գտնվում է նախորդ տարվանից ցածր մակարդակում: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 11.9%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ աճել է շուրջ 2.1%-ով: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 14.0% և 5.4%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. հունիսին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 6.4 տոկոսային կետով:

Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 17.3%, որը ընդհանուր ավանդների աճին նպաստել է 3.6 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում: 2024թ. հունիսին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 19.4%-ով՝ նախորդ տարվա աճից լինելով էական բարձր մակարդակում: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալը նույնպես աճել է, սակայն ավելի փոքր տեմպով՝ շուրջ 6.2%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել հիմնականում ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 20.3%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել 19.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ իրավաբանական անձանց, և՛ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 20.8% և 19.9%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 10.3 և 10.0 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ¹⁰




Հունիսին վարկերի աճին ամենամեծ նպաստումը ունեցել է սպառողական վարկերի աճը, որը կազմել է 6.4 տոկոսային կետ (նախորդ ամսվա համեմատ

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը

արագանալով 1.0 տոկոսային կետով)՝ գերազանցելով հիպոթեքային վարկերի 4.8 տոկոսային կետ նպաստմանը: Այս վարկատեսակների աճերի տեմպերը բավական բարձր են՝ համապատասխանաբար 29.5% (նախորդ ամսվա համեմատ արագացել է 4.5 տոկոսային կետով) և 22.5% (նախորդ ամսվա համեմատ մնացել է նույնը) և գերազանցում են տնտեսության մյուս կարևոր ցուցանիշների աճի տեմպերին, ինչպիսիք են տնտեսական աճը, աշխատավարձերի աճերը և այլն: Ընդ որում, սպառողական վարկերի աճի տեմպը արագացման միտում ունի, ինչը միջնաժամկետում կարող է ստեղծել կայունության ռիսկեր: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճում են գրեթե բոլոր ճյուղերում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ խերհոսքը շարունակում է նվազել: 2024թ. հունվար-մայիս ամիսներին դրամական միջոցների զուտ խերհոսքը կազմել է 449.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազելով 41.4%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է խերհոսքի շուրջ 15.8%-ով նվազմամբ:

բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

¹¹ Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճն էականորեն ցածր է տարեսկզբի ցուցանիշներից, իսկ հաջորդ ամիսներին կարող է առավել դանդաղել: Ինչպես նախկինում նշում էինք, տարեսկզբի, ինչպես նաև նախորդ տարվա վերջի բարձր տնտեսական աճերը պայմանավորված էին ժամանակավոր գործոններով, որոնց դերն արագորեն կրճատվում է վերջին ամիսներին՝ հանգեցնելով տնտեսական ակտիվության ցուցանիշի դանդաղմանը: Այս միտումն ակնկալվում է նաև գալիք ամիսներին:

2. Հիմնականում ոսկերչական գործունեության՝ ոսկու վերաարտահանման կտրուկ նվազման արդյունքում դանդաղել են նաև արտահանման և ներմուծման աճի տեմպերը: Ընդ որում, եթե արտահանման և ներմուծման ծավալներից նվազեցնենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու վերաարտահանման մասը) ծավալները, ապա կստացվի, որ արտահանման ծավալը նվազել է 15.6%-ով, իսկ ներմուծման ծավալը՝ 10.0%-ով: Սա բավական մտահոգիչ է, քանի որ մի կողմից՝ մատնանշում է ՀՀ արտահանման պոտենցիալի կորստի, մյուս կողմից՝ ներքին պահանջարկի նվազման մասին:

3. Պետական բյուջեի ցուցանիշները թերակատարվել են: Հարկային եկամուտներն էականորեն թերակատարվել են բյուջեով սահմանված պլանի նկատմամբ՝ բյուջեով հաստատված 1,304.2 մլրդ դրամի փոխարեն փաստացի կազմելով 1,187.6 մլրդ դրամ՝ 116.6 մլրդ դրամով պակաս: Բյուջեի ծախսերը ևս թերակատարվել են՝ շուրջ 130.0 մլրդ դրամով: Հատկանշական է, որ թերակատարումն արձանագրվել է ընթացիկ ծախսերի գծով, մինչդեռ կապիտալ ծախսերը գերակատարվել են 5.1 մլրդ դրամով: Վերջինս հիմնականում պայմանավորված է պաշտպանության ոլորտում մեծ ծավալով ծախսերի իրականացմամբ:

4. Վարկերի աճը շարունակում է մեծամասամբ պայմանավորված լինել սպառողական և հիփոթեքային վարկերի աճերով: 2024թ. սպառողական վարկերի աճի տեմպը բավական բարձր է եղել և վերջին ամիսներին շարունակել է արագանալ՝ հունիսին հասնելով 29.5%-ի: Միևնույն ժամանակ հիփոթեքային վարկերի աճը նույնպես բավական բարձր է՝ 22.5%: Այս աճերը մտահոգիչ են, քանի որ, փաստորեն, տնային տնտեսությունների պարտավորությունները (վարկերը) աճում են նրանց եկամուտներից (աշխատավարձ, դրամական փոխանցումներ և այլն) էականորեն ավելի բարձր տեմպով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: